Տաղաւարեալ անկէտ աւուրքք յիս հանգիցէ յարաժամ.
Եւ Ձիթենեաց լերին՝ ուր հետք դարշապարացդ նշմարին,
Փառք և պարծանք աստ տարրացին յանսուտ նշան քո դարձին։
Քանզի որ օր հինն այն Սիոն զքեզ ի խաչ բևեռեաց,
Դարձար առ Հայր Քո առաքիչ անցեալ ընդ սար ձիթենեաց.
Այլ փոյթ իջեր Հօրդ ի ծոցոյ ոսկի ուռամբ հաստատել,
Ի հիմունս իմ խարխուլ սակի քեզ բնակարան նոր հաստել։
Դու ասացեր՝ այս է հանգիստ իմոյ Ընձին յաւիտեան.
Աստ բնակեցայց, զի սա գրաւէ զշնորհ իմոյ հաճութեան.
Եւ իմ դստերք երեսնևօթն աստ ի լապտեր Սանդխտոյ,
Զարիւն իւրեանց կայլակեցին իբր հանգանակ սուրբ ձիթոյ։
Մին է գլուխ իմ՝ որ եմ Դշխոյ, Հարսն երկնաւոր փեսայի,
Երեք գլուխք օրիորդաց զենլեաց ի սէր Միածնի.
Յորժամ բերցէ իմ տարփալին անմահ փեսայն ոսկեդար,
Յորդեսցի ջուր իմ ի Քասաղ, և պտուղ քաղցր բերցէ ծառ „ ։

ՏԵՐՈՒՆԻ ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ.

# ԱԶԳԱՅԻՆ

## Ի ՆՊԱՍՏ ՍՈՎԵԼՈՑ.

Համայն աշխարհ լսեց Ասիոյ մի քանի կողմանց մէջ՝ ի Պաղստին, յԵօզղատ, եւն. եւն. տիրած սաստիկ սովը, որով բազում մարդիկ չարաչար կտագնապին, մանաւանդ խիստ ձմեռ եւս վերաժամանելով և ճանապարհաց հաղորդակցութիւնք դժուարանալով՝ գրեթէ իսպառ յուսահատութեան մէջ կտառապին տեղական թշուառ բնակիչքն։ Այն աստիճանի հասած են՝ որ գոհ պիտի լինին եթէ ուտելոյ խոտ անգամ գտնեն։

Թշուառ ծնողք, ինքեանք սովալլուկ տագնապելէ զատ՝ իւրեանց զաւակաց աղիողորմ հեկեկանքը լսելով և չկարողանալով հանդուրժել՝ ոմանք ի յուսահատութենէ ստիպեալ՝ գաղթականութեան կելնեն և ի ճանապարհին կամ անօթութենէն կմեռնին և կամ ցրտէն կսառին. ոմանք ընդ զաւակացն ի միասին արտասուաց հեղեղներ հոսելով և աշխարելով ժամէ ի ժամ կսպասեն մահուան ճիրանաց զոհ երթալոյ. մինչև անգամ մի քանի ծնողք իւրեանց զաւակունքը մորթած են ի սնունդ անձանցն մի պաշար հայթայթելոյ կատաղի և գազանական մոլութեամբ՝ և խելագարութեամբ եւն։

Ահա այս հակիրճ կտորէն կիմացուի Ասիոյ բնակչաց սովալլուկ վիճակը, զոր հեռաւոր երկիրներ և օտար ազգեր անգամ լսելով՝ մարդասիրաբար ի գութ կշարժին և կարևոր օգնութիւններ կնուիրեն։

Տեղական Կառավարութիւն ամեն ջանք և խնամք ի գործ կդնէ սովելոց դառն վիճակը թեթևցնելոյ համար։

Տաճկաստանի ամեն կողմն հանգանակութիւններ բացուած են ի նպաստ սովելոց, ինչպէս նաև նոյն կողմեր բնակիչ եղող իւրաքանչիւր ազգաց ի Պօլիս գտնըւած Պատրիարքարանաց և գլխաւորաց կողմանէ ևս յատուկ յանձնախումբեր կազմած՝ իւրաքանչիւրն իւր ազգի համար առանձին հանգանակութիւն բացած է և օգնութիւն կհասցնէ տառապելոց։

Ըստ այսմ Պօլսոյ Հայոց Պատրիարքարանի կողմէն ևս մեր սովալլուկ եղբարց համար ամեն կարելի միջոց ձեռք առնըւելով՝ օգնութիւններ հայթայթած և հասուցած են որոց արժան է։ Մի և նոյն ժամանակ՝ ինչպէս սովալլուկ Հայոց տեղական ազգային մի քանի Թեմական խորհուրդներէն պաղատագին խնդիրներ, նոյնպէս Պօլսոյ Հայոց Ս. Պատրիարք Գեր. Ներսէս Արքեպիսկոպոս Թախանձագին գրութիւն և հեռագիր փութացուցին առ Վեհ. Հայրապետ մեր, որով կհայցէին Ռուսաստանի Հայերէն ևս օգնութիւններ հասցնել առ սովալլուկ Հայս։

Վեհ. Հայրապետ՝ ըստ տրամադրութեան օրինաց՝ ներկայ ամսոյս մէջ Կայսերական Կառավարութենէն թոյլտուութիւն ընդունելով Սինոդի միջոցաւ Թեմական Ատենից և Հոգևոր կառավարութեանց վերայ պէտք եղած պատուէրները հասցուց և անօրինեց՝ ամեն կողմ նըպաստներ հաւաքելոյ համար։

Երբ մեր սիրելի եղբայրները անշուշտ կգան Ըսիարնակ Հայոց,—որք ևս մեր սիրելի և հարազատ եղբայրներ են,—սովոյն տիրած կողմերում գտնեալ **քսան և հինգ հազար** սովալլուկ Հայոց կը կրկնեմք գժբաղդ և թշուառ վիճակը և մահամերձ ճգնաժամ վտանգը, կփութան ըստ կարեաց ձեռն օգնութեան կարկառելոյ, քաջ գիտնալով՝ որ ամեն մի կոպէկը՝ մահուան ճիրաններէն մի մի հայ՝ մէն մի սովալլուկ եղբայրը կորզելոյ պիտի ծառայէ։

Ո՛հ, զի՞նչ քան զայս նուիրական առաքինութիւն վսեմ և գերազանց կարող է լինել քաղցածին հաց տալով, մերկը զգեցնելով։ Ըստ որում աշխարհի Փրկիչ Յիսուս Քրիստոս այսպիսի առաքինութիւնքը ինքեան արած կընդունի։ Ո՜ւր թողումք՝ որ այն քաղցածները՝ ՀԱՅ և մեր արենակից հարազատ եղբայրները են, և անդադար և սրտառուչ պաղատանօք կբաղխեն մեր սրտից զգացումները և աղիքները կգալարեն կարծես հոգեվարք և շնչասպառ անկեալ՝ **գութ**, **օգնութիւն** և **հա՜ց** հայցելով։

Հայե՛ր, ողջամիտ և հարազատ Հայե՛ր, մեր բարեհամբաւեալ սովորական առատասրտութեամբ և ողորմածութեամբ փութամք մեր եղբարց օգնելոյ և զնոսա ըստ կարելւոյն մխիթարելոյ։

~~~~~~~~

## Ի ԳԻՍՈՒ ՎԱՆՔ·

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Նուխւոյ Վիճակումն երկու նշանաւոր հինորեայ Վանորայք կան,—Ճալէթու և Սրբոյն Եղիշէի Առաքելոյն Գիսու.—այն Վանորայք ի վաղուց անտի ցայսօր պահպանված են և պահպանվում են տեղական Յաջորդ Վարդապետաց վերահսկողութեամբը։ Ճալէթու վանուց շինութեանց մէջ ժամանակ առ ժամանակ վերանորոգութիւններ են եղած, որպէս ի ժամանակի . . . . . . . Արամեանցի, նոյնպէս և ներկայ Յաջորդ Վրթանէս Վարդապետի Մուրատեանց։ Թէպէտ Գիսու Վանուց համար չեմ մոռանում ասել՝ զի Արամեանցի օրօքն ի
~~~~~~~~